ՆԱԽԱԳԻԾ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Կ-076[2]-17.07.2017-ԱՍ-011/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքում կատարել հետևյալ փոփոխությունն ու լրացումը.

1) 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի 2.5-րդ ենթակետից հանել «կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից» բառերը:

2) 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի 2.6-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել:

3) 20.1-ին հոդվածի 1-ին մասի աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ 13-րդ կետով.

«13) Գենետիկ ինժեներիայի գործունեության իրականացման իրավունք ձեռք բերելու համար	տարեկան բազային տուրքի 50-ապատիկի չափով»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ
Կ-076-17.07.2017-ԱՍ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքում կատարել հետևյալ փոփոխությունն ու լրացումը.

1) 19-րդ հոդվածի 1-ին մասի ~~2.5-րդ կետից~~ *2-րդ կետի 2.5-րդ ենթակետից* հանել «կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից» բառերը:

2) 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի 2.6-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել:

3) 20.1-ին հոդվածի 1-ին մասի աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ 13-րդ կետով.

«13) Գենետիկ ինժեներիայի գործունեության իրականացման իրավունք ձեռք բերելու համար	տարեկան բազային տուրքի 50-ապատիկի չափով»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ և ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ					
	Առաջարկության հեղինակը, գրության ամսաթիվը, գրության համարը	**Նախագծի այն մասը, որին վերաբերում է առաջարկը (փոփոխությունը, լրացումը).**	**Առաջարկության (փոփոխության, լրացման) բովանդակությունը**	**Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը**	**Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը**
1.	ՀՀ կառավարություն	**Հոդված 1.** «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածի 1-ին մաս:	«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասում «2.5-րդ կետից» բառերը փոխարինել «2-րդ կետի 2.5-րդ ենթակետից» բառերով՝ հիմք ընդունելով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի դրույթները:	Ընդունվել է, Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է: